ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

18.09.2013թ.
210-ի 5

“Լույս” հիմնադրամի կրթական ծրագրի
ղեկավար տիկին Ժաքլին Կարաասլանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Կարաասլանյան,

Մեզ է դիմել “Հանուն ժողովրդավարության” ընկերակցության գործադիր տնօրեն Հովհաննես Ասրյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: “Լույս” հիմնադրամը 2013-2014 ուսումնական տարվա համար կրթաթոշակ է տրամադրել Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) տասը ուսանողների: 2013թ.-ի օգոստոսի 26-ին “Հանուն ժողովրդավարության” ընկերակցությունը դիմել է Ձեզ՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ վերը նշված տասը ուսանողների կողմից Լոնդոնի համալսարանական քոլեջի վերջնական հրավերների (unconditional offer) ստացման ճշգրիտ ժամկետների վերաբերյալ: Սակայն, “Հանուն ժողովրդավարության” ընկերակցությունը մինչ օրս որեւէ պատասխան չի ստացել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ վերը նշված տասը ուսանողների կողմից Լոնդոնի համալսարանական քոլեջի վերջնական հրավերների (unconditional offer) ստացման ճշգրիտ ժամկետների վերաբերյալ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան